

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԾ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՄ)

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES
(COLLETTION OF SCIENTIFIC ARTICLES)

ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2015

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի և
Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. Էդիկ Մինասյան
Խմբագրական խորհուրդ՝

Արամ Մինոնյան - նախագահ (ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Պետրոս Հովհաննիսյան - պատմասխանատու քարտուղար (պատմ. գիտ. թեկն., պրոֆ.), Ալբերտ Ստեփանյան (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Հայկ Ավետիսյան (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Հայրապետ Մարգարյան. (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Լևոն Չուգասզյան (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), Իգիթ Դարիբյան (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Հենրիկ Աբրահամյան (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Հայկազ Հովհաննիսյան (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Համլետ Պետրոսյան (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Աշոտ Ներսիսյան (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), Արման Եղիազարյան (պատմ. գիտ. դոկտոր), Հովիկ Գրիգորյան (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), Մխիթար Գաբրիելյան (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), Հակոբ Պետրոսյան (բանասիր. գիտ. թեկն.)

Главный редактор: докт. ист. наук, проф. Эдик Минасян

Редакционная коллегия:

Արամ Սիմոնյան (председатель, ректор ЕГУ, членкор. АН Республики Армения, докт. ист. н., проф.), Ашот Мелконян (членкор. АН Республики Армения, докт. ист. н., проф.), Петрос Оганесян – ответ. секретарь (канд. ист. н., проф.), Альберт Степанян (докт. ист. н., проф.), Айк Аветисян (докт. ист. н., проф.), Айрапет Маргарян (докт. ист. н., проф.), Левон Чугасзян (докт. Искусствовед. н. проф.), Игит Гарибян (докт. ист. н., проф.), Генрих Абрамян (докт. ист. н., проф.), Айказ Оганесян (докт. ист. н., проф.), Гамлет Петросян (докт. ист. н., проф.), Ашот Нерсисян (докт. ист. н., проф.), Арман Егиазарян (докт. ист. наук), Овик Григорян (канд. ист. н., доц.), Мхитар Габриелян (канд. ист. н., доц.), Акол Петросян (канд. филолог. наук)

Editor-in-Chief- Doctor of Sciences, prof. Edik Minasyan

Editorial Board:

Aram Simonyan (Chairman, Rector of YSU, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), Ashot Melkonyan (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, prof.), Petros Hovhannissyan (Executive Secretary, PhD in History, prof.), Albert Stepanyan (Doctor of Sciences, prof.), Hayk Avetisyan (Doctor of Sciences, prof.), Hairapet Margaryan (Doctor of Sciences, prof.), Levon Chugaszyan (Doctor of Arts, prof.), Igit Gharibyan (Doctor of Sciences, prof.), Henrik Abramyan (Doctor of Sciences, prof.), Haikaz Hovhannissyan (Doctor of Sciences, prof.), Hamlet Petrosyan (Doctor of Sciences, prof.), Ashot Nersisyan (Doctor of Sciences, prof.), Aman Yeghiazaryan (Doctor of Sciences), Hovik Grigoryan (PhD of History, docent), Mkhitar Gabrielyan (PhD of History, docent), Hakob Petrosyan (PhD in Philology)

ISSN 1829-2771

Ա.Պետրոսյանի «Ձկնորսական մշակույթը Հայաստանում,
պատմաագագրական ուսումնասիրություն», ՀԳՄ հրատ., 2015, 113 էջ

Հայաստանի նախարտադրական կենցաղի ուսումնասիրության մեջ ուշագրավ է յուրացնող տնտեսաձևերերի հետազոտման հիմնահարցը: Այն անցնելով հազարամյակներով՝ հարատևել է մինչև մեր ժամանակները՝ կորցնելով երբեմնի նշանակությունը: Ազգագրագետ հեղինակը հնագիտական, մատենագրական, բանահյուսական, վիճակագրական, գրավոր, թանագրանային, արխիվային և այլ նյութերի համեմատական վերլուծության շնորհիվ բացահայտել է ձկնորսության ժողովրդական եղանակները, աշխատանքային գործիքների զարգացման ու կատարելագործման ընթացքը, զբաղմունքով պայմանավորված ժողովրդական փորձն ու հմտությունները, հավատալիքների թեև ոչ հարուստ, սակայն ուշագրավ համակարգը, դրանց վերապրուկային դրսևորումները:

Վերոհիշյալ աղբյուրներում առկա վկայությունները նա հարստացրել է ՀՀ մի շարք պատմաագագագրական շրջաններում գրառելով դաշտային ազգագրական նյութերը, որոնք կազմում են գրախոսվող շարադրանքի հենքը:

Այդ նյութերը գրառվել են 20-րդ դարի երկրորդ կեսին ԵՊՀ, «Գեղարքունիք» և «Ձանգեգուր» արշավախմբերի գործունեության («արշավախմբի ղեկավար Ա.Պետրոսյան»), ինչպես նաև անհատական գործուղումների ժամանակ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդարձակ պատմաագագագրական ակնարկից, երեք գլուխներից, ամփոփումից, օգտագործված գրականության ցանկից և հավելված-տախտակներից:

Պատմաագագագրական ակնարկում հեղինակը հենվելով բազմաբնույթ նյութերի վրա՝ անդրադարձել է ձկնորսության զարգացման, անցած փուլերի, Սևանի ավազանի ձկնորսությունը կապալով տալու, ձկնորսությունից ստացած եկամուտների, ձկան որսի արգելքի տարիներ սահմանելու, լճի ուսումնասիրման և նավագնացություն հաստատելու, կապալային ձկնորսությունը Արևելյան Հայաստանի մյուս գետերում ու լճերում կիրառելու, Սևանի միաբանությանը հատկացված ձկնորսական տեղամասի շահագործման և այլ հարցերի:

Ձկնորսության ժողովրդական եղանակները զլխում Ա.Պետրոսյանը քննարկել է գետային ու լճային ձկնորսության խնդիրները: Գետային ձկնորսության եղանակներից անդրադարձել է ձեռքով, նիզակ-եռաժանիով «խշտ ու խշտար»-ով, գետի չանգալով, բահով, պարանով, սալայով ու կողովով, ձկնորսական թարփով, ձկնորսական բանդով, թարփի սալայով, գետի ճյուղը կտրելով, ծվարով «ավլաղ»-ով, զուլայով, լենդը սիզգայով, ջրաղացի թարփով, «քարե ծուղակ»-ով, ձեռաց թռռով, տկալաստով,

«սանտերք»-ով, մուրճով, կարթով, պարանով, թուկով և այլ եղանակներով արվող ձկնորսությանը: Լճային ձկնորսության եղանակներից անդրադարձել է եռաժանիով ու նիզակով, չանգալով, լճի կամ պարանի կեռիկով, ծիծեռով կամ փայլախայծով, կարթավոր ուռկանով «տուզախ», դրվող կամ կանգնեցվող ցանցով, լճային նետվող ցանցով, «ակլատիզ», ցանցավոր ուռկանով, անշարժ ուռկանով և այլ ձկնորսական եղանակներին:

Արևելյան Հայաստանի գետային ու լճային ձկնորսության ժողովրդական եղանակների ուսումնասիրությունը հեղինակին բերել է այն հետևության, որ դրանք հանդես են եկել որոշակի ինքնատիպությամբ՝ ձեռք բերելով ռեզիոնալ առանձնահատկություններ: Միաժամանակ ուղեկցվել են համահայկական ձկնորսական մշակույթի բազմաթիվ ընդհանրություններով:

Ձկան և ձկնորսության հետ կապված հավատալիքները շարադրելիս հեղինակն այդ բնագավառին վերաբերող նյութերը տիպաբանել է նմանողական, «պահպանիչ» և «բուժիչ» բնույթի ծեսերի ու արարողությունների, որոնք նպատակ են ունեցել ապահովել ձկան որսի բարեհաջող իրականացումը, աշխատանքային գործիքների ու որսածների հաջողության ապահովումը, Վան և Սևան լճերը հանդարտեցնելուն, ն փոթորիկները մեղմելու, չար աչքը կոտորակելուն:

Մենագրության վերջին գլուխը նվիրված է ձկան և ձկնորսության հետ կապված բառերին ու դարձվածքներին: Վերջին մի քանի տասնամյակներին գետային և լճային ձկնորսությունը դուրս է մղվել կենցաղից, մոռացության է տրվել դրանցով պայմանավորված հարուստ տերմինաբանությունը: Հեղինակի բնորոշմամբ դրանց աննշան մասն է տեղ գտել հայտնի բառարաններում, շատ դեպքերում խիստ նեղացվել է բառի իմաստը: Հեղինակի կողմից ձեռք բերված 250 բառերից ու դարձվածքներից միայն 30-ն է տեղ գտել բառարաններում, մյուսները շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Այդ բառերն ու դարձվածքներն ընդգրկում են ձկնորսական մշակույթի աշխատանքային եղանակները, աշխատանքային գործիքների տեխնիկա-տեխնոլոգիական, զբաղմունքի սոցիալ-ժիսական, պատմամշակութային և այլ որակներ, որոնք ամբողջացնում են ձկնորսական մշակույթի ձևավորման ու զարգացման անցած ուղին՝ հսկայական տարածության ու ժամանակի մեջ:

Սևանա լիճը կապալով շահագործելու, ձկնորսական տեղամասերի բաժանելու, ձկան որսի արգելքի տարիները սահմանելու և այլ միջոցների փորձի կիրառումը մեր օրերում հնարավոր կդարձնի Սևանա լճի ինչպես պահպանման, այնպես էլ զանգվածային թալանը կանխելուն:

Կարևոր է 41 տախտակների առկայությունը աշխատանքում, որը հեղինակը ձեռք է բերել տարբեր աղբյուրներից և հատկապես իր դաշտային հավաքչական աշխա-

տանքների ժամանակ: Այդ նյութերը շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ, կարող են օգտագործվել բանագարանների ցուցադրություններում:

Ա.Պետրոսյանի գրախոսվող մենագրությունը նրա երկու տասնամյակների պրպտումների պրոյունք է՝ գրված գիտական պատշաճ մակարդակով, նկարների հետ մեկտեղ լուրջ ներդրում է հայ ազգության ասպարեզում և հանդիսանում է բացառիկ աղբյուր վերոհիշյալ խնդիրների պարզաբանման համար:

**Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ՝
պ.գ.դ., պրոֆ. Հ.Ավետիսյան**

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄՇԱԿՈՒՅՑ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

(ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐԿԱԾՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Խմբագիր՝ Հակոբ Պետրոսյան

Համակարգչային ձևավորումը

Ռուզաննա Աբգարյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52: Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52, Address:
0025, Yerevan, Abovyan 52, history@ysu.am, edikmanasyan@hotmail.com,
tel: 54-43-92, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Այ. Մանուկյան 1
«Սեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО "Мекнарк", Ереван, ул. Абовяна 41